

Լաբորատոր աշխատանք N°1

Ա. Չորսուի ծավալի որոշումը

Աշխատանքի նպատակը:



Աշխատանքի նպատակն է որոշել ուղղանկյունանիստի ձև ունեցող չորսուի ծավալը:

Անհրաժեշտ սարքեր և նյութեր

Չորսու, քանոն:

Աշխատանքի ընթացքը

Քանոնով չափել չորսուի երկարությունը, լայնությունը և բարձրությունը: Արդյունքները գրանցել աղյուսակում:



| Երկարություն (սմ) | Լայնություն (սմ) | Բարձրություն (սմ) |
|-------------------|------------------|-------------------|
| $L_1 =$ | $L_2 =$ | $L_3 =$ |

Չորսուի ծավալը որոշեք հետևյալ բանաձևով.

$$V = L_1 \times L_2 \times L_3$$

Բ. Դասագրքի մեկ թերթի հաստության որոշումը:



Աշխատանքի նպատակը

«Բնություն» դասագրքի մեկ թերթի հաստության որոշումը:

Անհրաժեշտ սարքեր և նյութեր

Դասագիրք, քանոն:

Աշխատանքի ընթացքը



Դասագրքի թերթերը շատ բարակ են և անմիջականորեն քանոնով մեկ թերթի հաստությունը չափել հնարավոր չէ: Դրա համար անհրաժեշտ է կատարել անուղղակի չափում:

1. Քանոնով չափեք դասագրքի բոլոր թերթերի ընդհանուր հաստությունը, բացառելով դասագրքի կազմը: (Օրինակ, վերցրեք էջ 3-ից մինչև դասագրքի նախավերջին էջը): Չափելիս թերթերը սեղմեք, որպեսզի թերթերի միջև ազատ տարածություններ չմնան:

2. Հաշվեք թերթերի քանակը (N):

3. Ընդհանուր հաստությունը բաժանեք թերթերի քանակին: Ստացված արդյունքն էլ կլինի մեկ թերթի հաստությունը.

$$H = L / N$$

4. Չափման արդյունքները գրանցեք աղյուսակում

| Թերթերի ընդհանուր հաստությունը (սմ) | Թերթերի ընդհանուր թիվը | Մեկ թերթի հաստությունը |
|-------------------------------------|------------------------|------------------------|
| L = | N = | h = |